ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Պետական Հատվածի Արդիականացման Երկրորդ Ծրագիր
Վարկ No. 7854-AM

Առաջադրանքի անվանումը՝ Դիմումների առցանց ներկայացման համակարգի մշակում ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության համար

Հղում No. (համաձայն Գնումների Պլանի): PSMP2- C-3.3.2.2

Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է ստացել Համաշխարհային բանկից “Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագրի ֆինանսավորման համար, նպատակ ունի օգտագործել այս միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների համար:

Սույն առաջադրանքով նախատեսվում է արտասահմանում Հայաստանի քաղաքացիների բնակության հասցեի գրանցման հնարավորության ստեղծում և էլ. վիզաների համակարգի առցանց դիմումների գոյություն ունեցող մոդուլի արդիականացում՝ սահմանների կառավարման համակարգի բարելավման արդյունքում ի հայտ եկած փոփոխությունների ներառման միջոցով:

Արտասահմանում ՀՀ քաղաքացիների բնակության հասցեի գրանցումը նոր պահանջ է, որն ուժի մեջ է մտնում 2015թ. փետրվարից և ՀՀ քաղաքացիներից կպահանջի հյուպատոսական ծառայությունում գրանցել արտասահմանում իրենց բնակության հասցեն, եթե նրանք բնակվում են տվյալ երկրում ավելի քան 6 ամիս:

Էլ. վիզաների համակարգի առցանց մոդուլի արդիականացումը կպահանջի գոյություն ունեցող բազմալեզու (3 լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն) մոդուլի վերածրագրավորում կամ նոր մոդուլի մշակում՝ պահանջներին համապատասխանելու համար:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածը կազմում է մոտավորապես 6 ամիս:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն ՊՀ-ն (ԱՖԾԿԿ) հրավիրում են խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կհաստատեն, որ նրանք ունեն ծառայություններն իրականացնելու համար պահանջվող որակավորումը և համապատասխան փորձառությունը:

Մասնավորապես, հետաքրքրվածության հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.
հիմնական բիզնեսի եւ գործունեության տարիների մանրամասն նկարագիրը՝ ներառյալ մատուցված ծառայությունների շրջանակը, ավարտված ծրագրերը, հասցեները, կոնտակտային տվյալները և այլն:

Որակավորման պահանջներ.

Խորհրդատվական ընկերությունը պետք է համապատասխանի հետևյալ որակավորման պահանջներին և ունենա՝

- ծրագրային ապահովման մշակման առնվազն 3 տարվա մասնագիտացում,
- առցանց էլ-կառավարման համակարգերի մշակման առնվազն 3 տարվա փորձ,
- Հայաստանում կամ ԱՊՀ երկրներում էլ. կառավարման համակարգի մշակման առնվազն մեկ հաջող փորձ:

Ընկերությունը պետք է ունենա առնվազն 100,000 ԱՄՆ դոլարի տարեկան շրջանառություն:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման Ուղեցույցների» (2011 թ. հունվար, խմբագրված՝ 2014 թ. հուլիսին) («Խորհրդատուի ուղեցույց») 1.9 պարագրաֆին, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:

Իրենց որակավորումը բարձրացնելու համար Խորհրդատուները կարող են համագործակցել այլ ընկերությունների հետ՝ համատեղ ձեռնարկությամբ կամ ենթախորհրդատվությամբ:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի «Ուղեցույցներ. ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձում» փաստաթղթում (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով հետևյալ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչ 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է գրավոր ձևով ներկայացվեն ներքոնշյալ հասցեով (անձամբ, փոստով կամ էլ-հասցեով) մինչև **2015թ. մարտի 4-ը, ժ. 18:00** (տեղական ժամանակով):

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (374-11) 91 05 81, (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 54 57 08
Էլ-փոստ՝ info@ffpmc.am